

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հերևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի 25.08.2015 թ. նիստի

### Մասնակցությամբ՝

«Արմավիրի մարզպետ»

Ա. Ղաիրամանյանի

«Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հերևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Ա. Ղուկասյանի

«Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության վարչության պետ՝

Վ. Մկրտչյանի

«Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝

Հ. Հարությունյանի

«Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ՝

Ա. Պողոսյանի

«Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝

Ա. Այվազյանի

«Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության գյուղատնտեսության բաժնի

պետ՝

Մ.Սարիբեկյանի

Գյուղատնտեսության աջակցության

Արմավիրի մարզային կենտրոնի տնօրեն՝

Լ.Ալեքսանյանի

«Արմավիրի մարզի կարկրահարությունից տուժած համայնքների ղեկավարների

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

**1. 22.08.2015թ. ուժեղ քամու ուղեկցությամբ տեղի ունեցած տևական կարկրահարության հետևանքով «Արմավիրի մարզի մի շարք համայնքներում գյուղատնտեսությանը հասցված վնասները գնահատելու միջոցառումների մասին**

**/ Ա.Ղահրամանյան- «Արմավիրի մարզպետ/**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը օրակարգային հարցի առնչությամբ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ 2015 թվականի օգոստոսի 22-ին ուժեղ քամու ուղեկցությամբ տեղի ունեցած տևական կարկրահարությունից, արդեն օգոստոսի 23-ին կատարված նախնական ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ էպես վնասվել են Արմավիրի մարզի Քարակերտ, Մյասնիկյան, Կողբավան, Բաղրամյան/Բաղր./, Դալարիկ, Բազարան, Մրզաշատ, Շենիկ գյուղական համայնքների գյուղատնտեսական մշակաբույսերը, ցանքատարածությունները, այգիները, ինչպես նաև Շենիկ համայնքի 27 ընտանիքներին պատկանող բնակելի տներն ու այլ շինությունները, Բաղրամյան/Բաղր./ համայնքի գյուղատնտեսության շենքի թիթեղյա տանիքը : Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է արագացնել և սեղմ ժամկետում ավարտել մարզի նշված համայնքներում կարկրահարության հետևանքով գյուղատնտեսությանը և շինություններին հասցված վնասների գնահատման աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը ներկայացնել մարզային հանձնաժողով՝ համապատասխան ընթացք տալու համար: Միաժամանակ նշվեց, որ համայնքներում վնասների գնահատման աշխատանքների կատարման միասնականությունն ապահովելու նպատակով արդեն հանձնարարվել է «Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության, վարչությանը՝ վնասների գնահատման և տեղեկատվական նյութերի



համապատասխան ձևաչափերը օպերատիվ կարգով տրամադրել կարկտահարությունից և ուժեղ քամուց փուժած համայնքների ղեկավարներին:

**Հանձնաժողովը որոշում է՝**

1. Առաջարկել ուժեղ քամու ուղեկցությամբ տեղի ունեցած կարկտահարությունից փուժած համայնքների ղեկավարներին, սերտորեն համագործակցելով ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության հետ՝

ա/ համայնքային հանձնաժողովների ակտերն ու տեղեկատվական նյութերը կազմել և մարզային հանձնաժողով ներկայացնել մշակված և տրամադրված ձևաչափերին/կցվում է/ համապատասխան,


բ/ մինչև օգոստոսի 27-ը ավարտել մարզի նշված 8 համայնքներում ուժեղ քամու ուղեկցությամբ տեղի ունեցած կարկտահարության պատճառով գյուղատնտեսությանը և շինություններին հասցված վնասների գնահատման աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից համապատասխան ձևաչափերով կազմված ակտերն ու տեղեկատվական նյութերն ուղարկել մարզային հանձնաժողով՝ քննարկելու և համաձայնեցված ակտերն ու տեղեկատվական նյութերը համապատասխան մարմիններ ներկայացնելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝



Մ. Քարտաշյան

Հանձնաժողովի քարտուղար՝



Դ. Դավթյան

